ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2015- 07.07/343
07.07.2015 թ.

ՀՀ գլխավոր դատախազ
Գևորգ Կոստանյանին

Պատճենը՝
ՀՀ հատուկ քննչական ծառայության
պետ Վ.Շահինյանին

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

2015թ. հուլիսի 6-ի ժամը 12:30-ին ՀՀ ոստիկանության աշխատակիցները բերման են ենթարկել էլեկտրաէներգիայի թանկացման դեմ խաղաղ նստացույց իրականացնող ցուցարարներին: Իրականացված գործողությունների արդյունքում ցույցի մասնակիցները ենթարկվել են բռնությունների և անմարդկային վերաբերմունքի:

Մասնավորապես 2015թ. հուլիսի 6-ին www.aravot.am կայք էջում հրապարակվել է «Վաղինակ Շուշանյան. «Վայրկյանների հարց է Բաղրամյան պողոտան փակելը[1]» վերնագիրը կրող նյութը ըստ, որի լրագրողի հարցին թե բերման ենթարկելու ընթացքում Վաղինակ Շուշանյանի նկատմամբ վատ վերաբերմունք ցուցաբերե՞լ են, նա պատասխանում է «Մինչև մեքենա հասցնելը՝ այո, մեքենայի մեջ ինձ չէ, բայց ընկերներիս հարվածել են: Անձամբ Հունան Պողոսյանին եմ ասել ու անուններով ասել եմ՝ ովքեր են հարվածել և ում են հարվածել: Կարմիր բերետավորների փոխգնդապետը, չեմ հիշում ազգանունը, անմիջապես Նարեկ Այվազյանին է հարվածել՝ բոլորիս աչքի առաջ՝ գլխին է հարվածել: Եվ անչափահաս Սպարտակ անունով տղային են հարվածել (նկատի ունի Սպարտակ Միրզոյանին»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Ձեր լիազորությունները դիմում եմ Ձեզ համապատասխան միջոցներ ձեռնարկել Վ. Շուշանյանի կողմից մատնանշած անօրինականություններ թույլ տրված ոստիկանության աշխատակցին (աշխատակիցներին) բացահայտելու և համապատասխան պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

1. Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հղումով՝ http://www.aravot.am/2015/07/06/590595/

Կից ներկայացնում եմ՝

1.www.aravot.am կայքէջում հրապարակված «Վայրկյանների հարց է Բաղրամյան պողոտան փակելը» վերնագիրը կրող նյութը,

2. www.aravot.am կայքէջում հրապարակված՝ «Արաբկիրի ոստիկանությունում տարբեր վնասվածքներով անչափահաս ցուցարարներ կան (ֆոտոշարք)» վերնագրով նյութը:

Հարգանքով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Զալյան
azalyan@hcav.am
հեռ.՝ 0322 4 22 68

Արավոտ (http://www.aravot.am)

16:04 | Հուլիս 6 2015

Վաղինակ Շուշանյան. «Վայրկյանների հարց է Բաղրամյան պողոտան փակելը» (http://www.aravot.am/2015/07/06/590595/)



Քիչ առաջ ոստիկանության կենտրոնական բաժանմունքից ազատ արձակվեց «Ոչ թալանին» նախաձեռնության համակարգող խմբի անդամ Վաղինակ Շուշանյանը: Նա լրագրողների հետ զրույցի ընթացքում ասաց, որ իրեն ուղղակի բաց են թողել, անգամ խոստացել են, որ առանց երեք ժամը լրանալու իրենց բաց են թողնելու:

Հարցին, թե բերման ենթարկման ընթացքում իր նկատմամբ վատ վերաբերմունք ցուցաբերե՞լ են, նա պատասխանեց. «Մինչեւ մեքենա հասցնելը՝ այո, մեքենայի մեջ ինձ չէ, բայց ընկերներիս հարվածել են: Անձամբ Հունան Պողոսյանին եմ ասել ու անուններով ասել եմ՝ ովքեր են հարվածել եւ ում են հարվածել: Կարմիրբերետավորների փոխգնդապետը, չեմ հիշում ազգանունը, անմիջապես Նարեկ Այվազյանին է հարվածել՝ բոլորիս աչքի առաջ՝ գլխին է հարվածել: Եվ անչափահաս Սպարտակ անունով տղային են հարվածել (նկատի ունի Սպարտակ Միրզոյանին (http://www.aravot.am/2015/07/06/590541/) .Ա. Չ.)»:

Նա հավելեց, որ գաղտնի թռքաբորբ է տանում եւ իմանալով, որ ոստիկանությունը պիտի գործողություն իրականացնի՝ գնացել է Բաղրամյան պողոտա, որ լինի իր ընկերների կողքին: Իսկ պայքարը, ըստ նրա, այնպես չէ, որ վերջացել է. «Վայրկյանների հարց է Բաղրամյան պողոտան փակելը: Ու թող չմտածեն, որ միայն Բաղրամյան պողոտայով կարելի է սահմանափակվել: Ինչքան փորձեն այսպիսի գործողություններ իրականացնել, այնքան իրենց վիճակն են բարդացնում»:

Մանրամասները՝ շուտով տեսանյութում:

Ամի ՉԻՉԱԿՅԱՆ

Արավոտ (http://www.aravot.am)

15:49 | Հուլիս 6 2015

Արաբկիրի ոստիկանությունում տարբեր վնասվածքներով անչափահաս ցուցարարներ կան (ֆոտոշարք) (http://www.aravot.am/2015/07/06/590581/)

Արաբկիրի ոստիկանության բաժնից ազատ են արձակվել 5 անչափահաս ցուցարարներ: Նրանցից 3-ը իրենց մարմնի տարբեր հատվածներում ունեն մարմնական տարբեր վնասվածքներ՝ կապտուկներ, քերծվածքներ եւ ուռածություն:

Նրանք բոլորն էլ պատմում են, որ այդ վնասվածքները ստացել են այսօր Բաղրամյան պողոտայից բերման ենթարկվելու ճանապարհին:

Մանրամասները՝ լուսանկարներում:

Առցանց Սոչիի մասին լուրերին facebook-ում բաժանորդագրվելու համար սեղմեք Like 106K

(http://www.aravot.am/wp-content/uploads/2015/07/cucararneri-vnasvacqner-5.jpg)

(http://www.aravot.am/wp-content/uploads/2015/07/cucararneri-vnasvacqner-4.jpg)

(http://www.aravot.am/wp-content/uploads/2015/07/cucararneri-vnasvacqner-3.jpg)



(http://www.aravot.am/wp-content/uploads/2015/07/cucararneri-vnasvacqner-2.jpg)

(http://www.aravot.am/wp-content/uploads/2015/07/cucararneri-vnasvacqner-1.jpg)

Արփինե ՍԻՄՈՆՅԱՆ

Համաձայն «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» օրենքի՝ լրատվական նյութերից քաղվածքների վերարտադրումը չպետք է բացահայտի լրատվական նյութի էական մասը: Կայքում լրատվական նյութերից քաղվածքներ վերարտադրելիս քաղվածքի վերնագրում լրատվական միջոցի անվանման նշումը պարտադիր է, նաեւ պարտադիր է կայքի ակտիվ հղումի տեղադրումը:

Հեղինակ Լրագրող
Արփինե ՍԻՄՈՆՅԱՆ
(http://www.aravot.am/author/arpine/)

ՆՄԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Ոստիկանական մեքենայում անչափահասի են ծեծել
(http://www.aravot.am/2015/07/06/590553/)

Ստեփան Սաֆարյան. «Ունենք տակավին ճգնաժամի մեջ գտնվող շարժում»

Բերանի կարերը քանդելուց հետո ցուցարարը հացադուլ է սկսել (Տեսանյութ)

Բաղրամյան պողոտա, թիվ ««...»» (պատմվածք)